հարեալ նա այն ամենավտանգաւոր կործանող դասակարգութիւնն է, որ հնում ինչպէս ազնուական է յայտնուել, այժմ ինչպէս կալուածատէր, իբրև պատուաւոր քաղաքացի, և իբրև շարչի քաղաքացի. իսկ ապագային կմնայ իմանալ թէ նա ինչ անուն կը կրէ։...

Այժմ գիւղացին երբ որ վտանգվում է անարդար կառավարութեան կաշառակէր պաշտօնեաներից, քրդերի յափշտակասիրութիւնից, նա դիմումէ իւր կարող ազգակցի օգնութեան. իսկ այդ արենակից կեղծաւորը, քաղցր խօսքերով տիրում է նորա ստացուածքին, դնում է նորա վզին յաւիտենական ստրկութեան տառատոկը։...

Գիւղացին տէրութեան պաշտօնեաների հարստահարութեան տակ հեծումէ, քրդերի հարստահարութեան տակ տրտնջում բողոքում է, հարստահարող ազգակցի հարստահարութեան տակ անմռունջ զոհի պէս ոչնչանում է։

Այսպէս են փոխակերպվում համեստ երկրագործ ընտանիքներից օրահացին կարօտ մշակները։

Այսօր մեծ. ունկնդիր, քո առաջից անդադար անցուդարձ անողը, քու ծառայութիւններդ կատարողը, քու աղբ ու կեղտ մաքրող բրդգզած արարածը, որ անցնում իւր օրը գրաստի շարչարանքով, գիշերումէ խոնաւ, հոտած անկիւն-